ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-11-17/12 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

7 դեկտեմբերի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Գևորգյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Հարությունյան (ԳՊ/ԳԱ), Ա.Մանուկյան (ԳՊ/ԳԱ),
Գ.Երեղյան (ԳՊ/ԲԱ), Գ.Օսիպյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Ք.Ջուլհակյան

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-11-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Կ.Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

- **ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-11-17/12** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից 06.12.2017թ. ստացված եզրակացությունը /կցվում է/՝ համաձայն որի մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Գևորգյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
- **ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-11-17/12** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝
  - **1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Լանկա» ՍՊԸ**
  - **3-րդ չափաբաժնի մասով ԱՁ Հայկ Գալստյանը**
  - **4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով «Էկոմիքս» ՍՊԸ**
  - **5-րդ չափաբաժնի մասով «Ստանդարտ-2014» ՍՊԸ**
- Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված 3-րդ կետի՝ անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:
- Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Կ.Գևորգյան)

2.1 Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

- Հանձնաժողովի հաջորդ՝ արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, գնումների համակարգման բաժին, Մ.Խորենացի 3, 7 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ -5, դեմ՝- 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Կ.Գևորգյան

Անդամ՝ ---------- Լ.Հարությունյան
---------- Ա.Մանուկյան
---------- Գ.Երեղյան
---------- Գ.Օսիպյան
---------- Ք.Ջուլհակյան

Քարտուղար